ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023 թվականի N 350 - Ա

«ՇՎԱՆԻՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ ԱԼԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ, 34-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ձևավորված մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությունը, հավակնորդի ներկայացրած փաստաթղթերը, 2023 թվականի սեպտեմբերի 19-ի հարցազրույցի N 2 արձանագրությունը և Ալեն Ավետիսյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2023 թվականի սեպտեմբերի 20-ից «Շվանիձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հավակնորդ Ալեն Ավետիսյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Աննա Հովհաննիսյանին 2023 թվականի սեպտեմբերի 20-ից ազատել «Շվանիձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 20
ք. Կապան